ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 173-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 765-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1696-Ն որոշմամբ հաստատված «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 27-րդ, 28-րդ և 32-րդ կետերը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 15-ի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին» N 765-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Ս. Աստուրյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Քաղաքականության վերլուծության Թուրփանջյան կենտրոնի ղեկավար (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Հ. Սուքիասյան - Պատմության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)» բառերով.

2) «Ռ. Գևորգյան - Ֆրանսիահայ պատմաբան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Դ. Կարապետյան – ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար» բառերով.

3) «Ա. Ավագյան - «Հայկական ժառանգություն» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Կ. Ավետիսյան - «Մշակույթի զարգացման» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ